

Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:



Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха (ОМУСА)**, размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhlib.am/>

E-mail: info@artsakhlib.am

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhlib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhelibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>

ՀԱՄԱԿԱՐԳՆԵՐ ԳԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳՆԵՐ ԳՐԱԳԱՐԱՆ

ԳՅԴ ԵՍԿ 07թ

«Ազգ եւ ժառանգություն»
Համահայկական
երիտասարդական
գիտաժողով



Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն
Ստեփանակերտ
սեպտեմբեր 26-30, 2006թ.

ՀՀ մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարություն
ԼՂՀ կրթության, մշակույթի եւ սպորտի նախարարություն
ՀՀ «Երիտասարդական միջոցառումների կազմակերպման
կենտրոն» ՊՈԱԿ
ԼՂՀ մշակույթի եւ երիտասարդության պալատ

«Ազգ եւ ժառանգություն»
համահայկական
երիտասարդական
գիտաժողով

Սեպտեմբեր 26-30 2006 թ.
Ստեփանակերտ

Գիտաժողովը նվիրվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
հռչակման 15-ամյակին

Խմբագրական խորհուրդ

Ս. Խանյան -բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
գիտության վաստակավոր գործիչ

Վ. Բալայան- պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

Ա. Մխիթարյան – հոգեբանական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր

Շ. Ասրյան- տնտեսագիտության ամբիոնի դասախոս

Լ. Բեգլարյան- տնտեսագիտության ամբիոնի դասախոս

Գրքում զետեղված են սեպտեմբերի 26-30-ը տեղի ունեցած
Համահայկական երիտասարդական գիտաժողովի զեկուցումները

ճամփով: Են ճամփեն սար ու ծորի մեջ քանց թել խճճված, կռվի ու կոտորումի իմ մոլոր ճամփեն դու կծկիս ու ետ դառնաս, ձգուկ»:

«Դավիթ» նովելում ամենուրեք հնչում է «Ով զարկվի դավաճան է» ֆիդայական թախսման-խոսքը, որը հաղթանակի կոչ է:

Թաթոն Սերոբի եզները խնդրել է, որ նոր բնակավայրում իր արտը վարի, սակայն նրա ուշքն ու միտքը երգրի, իրենց Հլո եզան հետ են: Իսկ Բարսեղը փնտրում ու գտնում է այն գինարբ ծաղիկը, որ հիշեցնում էր երգրում բույր տվող ծաղիկը:

Մուշեղ Գալշոյանի ստեղծագործությունը դասն է ժողովրդական այն իմաստության ըստ որի փրկության և հարատևման միջոցներից մեկը սրով ապրելու խորհուրդն է: Իսկ երկրորդը մայրենի լեզուն է, մայրենի այբուբենը:

Ծանոթանալով անվանի գրողի «Սարուբա սարի ամպերը» պատմվածաշարին, ակամայից մտքով թևում ես Սասուն, գրուցում էպոսային սասունցիների հետ, ապա գալիս և հասնում ես Արցախ աշխարհ, համոզվում, որ արցախցիների ոգին իր արմատներով հասնում է Սասուն, կոփվում Սասնա ծեփի խենթ վճռականությամբ, որի ապացույցը ազատագրված մեր Արցախն է, Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, որ դեռևս սպասում է իր այնպիսի զեղազեղվարպետին, որպիսին Մուշեղ Գալշոյանն է:

*Արմեն Ավանեսյան
ԵՊԴ*

Պետականության գաղափարի շուրջ (Վ. Գրիգորյանի «Դար կորստյան» վեպը)

Վարդան Գրիգորյանը գրողի այն տիպն է, որ հակված է կերպավորելու գրականության առարկան: Իրենից առաջ պատմավեպեր էին գրում պատմական այս կամ այն հերոսական շրջանի մասին. ինքը փորձեց շրջանցել հերոսներին: Հերոսական իրադարձություններն ու պատմական դարակազմիկ բարեփոխությունները չգրավեցին իր սիրտը: Անկում, ազգային ողբերգության հոգեբանական դրդիչներ, կործանման կանխագագացում՝ ահա թե ինչը դարձրեց պատմավեպի առարկա «Դար կորստյան» վեպում:

Վեպը մասերի չի բաժանված, չունի հետևողական դիպաշար, կառուցված է ներքին մենախոսության և վերիուշապատումների վրա: Հետևողական և գործողություններով հագեցած շարադրանքին այստեղ

փոխարինում է մտածումի և ներկայացման հատվածային կերպը: Չկան անգամ գործող անձինք, որովհետև չկա գործողություն: Այն ինչը սովորաբար գործողություն ենք անվանում, ոչ թե կատարվում է վեպում, այլ պատմվում է գլխավոր հերոսի՝ Գայլ Արշավիրի հուշերում:

Պատմությանն ու պատմական անցքերին անդրադառնում են ամեն անգամ, երբ հարկ է լինում ճշգրտումներ կատարելու և նորովի կողմնորոշվելու անցյալի խառն արահետների մեջ: Կարևոր է անցյալի վերագնահատումը, թերությունների և առավելությունների ընդգծումն ու ի ցույց դնելը, պատմական փաստից ճշմարտությունը քամելը, ինչը և անում է Վարդան Գրիգորյանը «Դար կորստյան» վեպում:

Վեպի առաջին իսկ տողերից ուրվագծվում է կորստյան ճանապարհը, որով քայլում է մի ողջ ժողովուրդ: Ոչ ոք չէր շեղվելու այդ ճանապարհից, ոչ ոք ճակատագրից չէր խուսանալիլու: Միայն ինքն էր՝ Գայլ Արշավիրը, մենակ ու հողմածեծ կանգնելու կորստյան ընթացքի հանդիման: Բոլորը փախչելու էին, լքելու էին, մոռանալու էին, թողնելու էին հող հայրենին, ինքը մենակ արյունլվա մատներով կառչելու էր հողից, պաշտպանելու էր հողը՝ որովհետև որոշել էր կռիվ տալ կործանման ժամանակի դեմ:

Վեպի գլխավոր մեխը ժամանակն է՝ կորստյան դարը: Բոլոր կերպարները այս ժամանակի ծնունդն են, ամեն ինչ սկիզբ է առնում կործանումից: Այս ժամանակի զավակն է և Գայլ Արշավիրը: Ի՞նչ է նա հիշում մանկությունից: Ահա հայրը, որ պատվիրում է գրել տոհմի պատմությունը, խոսում է ուժի ու մահվան, կռվելու և պատվով մեռնելու մասին, «իսկ ինքը անթարթ նայում էր սատկած աղավաղում, որի միսը որդը վաղուց կերել էր, մնացել է միայն ոսկորն ու փետուրը և մեկ էլ կես բուռ չմարսված դեղին ցորենը՝ շաղ եկած աղավաղ շուրջը, և մտածում էր, որ հոր ծրագրերն էլ աղավաղ կտցած ցորենի նման մնալու են չմարսված, քանի որ աչքերի առաջ աղեղնավորների սուրացող բանակն էր ու մորթված եղբայրների անշունչ մարմինները»: Այս պատկերը վեպում մի քանի անգամ կրկնվում է իբրև խորհրդանշան կանկան և քայքայումի և ավելի է խորացնում ցավը:

Չայոց պատմություն ու դառն ճակատագիր. Սեր պատմության սև ամպը միշտ մեզ ուղեկից է եղել, մեր աչքը՝ խնդրության սովոր:

Վարդան Գրիգորյանը խոսեց մեր հոգու խավարի մասին, հայ սրտի մթամածության մասին: Տեսավ վախը մեր մեջ ապրդած: Դարերի ծախողումներն անհետ չեն անցել, դարձել են սովորույթ, ապրումի ուժ, ավանդույթի հաջորդականություն: Սովորել ենք թուլանալ, թույլ լինել, խեղճ լինել ու բարի: Վախենալով ապրել ենք, վախը զգուշություն

համարել, այդ կերպ շատ բանի դիմացել, այդ պատճառով հաճախ սայթաքել, սխալվել ու շփոթահար մոլորվել:

Արշավիր Կամսարականը, երբ պատանի հոգևորական էր, տեսնում է թուրք զինվորին ու փախչում: Առաջին անգամ էր թուրք տեսնում, առաջին անգամ էր վախենում և առաջին անգամ էր փախչում: Ինչու՞ պետք է վախենար անգեն, ծուռուտն թուրքից ու փախչեր, չզիտեր, բայց վախեցավ ու փախավ, քանզի այդ վախն իր մեջ վաղուց կար, իր մարմնի մեջ էր, իր արյան բաղադրության մասն էր կազմում, կարծես ժառանգաբար փոխանցված: Նսեմացումը Արշավիրին գայլ դարձրեց, ըմբուսացրեց ոգին և նա ծառացավ Աստծո դեմ. «Միայն Աստծուն է հայտնի ճշմարտությունը, բայց ես այլևս չեմ ընդունում երկնային դատը,- գոչեց,- թող Աստված ընդունի իմ ճշմարտությունը, ինչպես աղանդավորներին ու մյուս անիրավներին է ընդունում: Ով չի ցանկանում մորթվել ով չի ցանկանում անհայրենիք մնալ, թող գայլ դառնա, թող կատարի հրամանը»:

Վեպի դիպաշարի առանցքը Անիի կործանումն է: Անին կործանվեց և սա՞ էր իր ճակատագիրը: Սակայն Անիի կործանումը սկսվել էր այդ ճակատագիր կոչվածից առաջ: Անիցիները պատժված էին կանխապես, պատժված էին կանխապես, պատժված էին պատժից առաջ, անկենդան էին դեռ մահվան դուռը չհասած, մարմին ունեին, բայց անմարմին էին. հարուստ էին ու ոչինչ չունեին: Եվ պատերազմի թոհուրոհում, կրակի և արյան հեղեղի մեջ հայ մարդիկ կարկամել-բարացել էին, նրանց վաղուց լքել էր կամքը: Կռվող չզիտեր, որ պետք է կռվել ու չէր կռվում: Ջորականները մոռացել էին անցած բոլոր հաղթություններն ու չէին հաղթում: Բոլոր քարոզիչները շփոթվել ու վիսատ խոսքեր էին արտաբերում, հավատի ծայրին հետևող չկար:

Արքան վազվել էր ամրոցում ու տարօրինակ գրքեր էր ընթերցում: Ինքնամիտի իր հոգին վարժեցնում էր աստղագուշակների ընկերակցությանն ու ոչ ոքի չէր ուզում տեսնել: Իր շուրջը դեռ կենդանի էր կյանքը, իսկ ինքը վաղուց հրաժարվել էր կյանքից, զորականներից, ժողովրդից: «Ինչ որոշված է երկնքում այն էլ կլինի», կարողում էր ու հուսահատ որոշել էր, որ մագաղաթի բոլոր չար գուշակությունները իր հայոց երկրի մասին են, իր երկրին են ուղղված:

Այս անենի դեմ միակ ըմբուսացողը՝ Գայլ Արշավիրը, հիշում է. «Իսկ երկիրն անտեր էր մնացել: Ով կարող էր կռվել՝ կռվում էր, ով չէր կարող կռվել՝ փախչում էր, ով չէր կարող փախչել՝ մեռնում էր: Այն ժամանակ, ավելի քան բառասուն տարի առաջ, եթե բոլորն էլ իր պես պայքարի ելնեին ընդդեմ իրենց մեջ նստած սարսափի, չփախչեին

արևելքից արևմուտք, հարավից հյուսիս, ամտերունջ չթողեին երկիրը, երկնքում սփռած աստղերի նման ցիրուցան չլինեին աշխարհով մեկ, գուցե չկատարվեի այն, ինչ հետո ճակատագիր էր կոչվելու: Իսկ այն ժամանակ դեռ չկար «ճակատագիր» կոչվածը, կային միայն նվաճողներ, իրենց տոհմապետ Սելջուկի անունով նոր հայրենիք փնտրելու ելած ցեղեր: Երբ թաք լցվում է, ջուրը թափվում և հոսում է այն ուղղությամբ, որտեղ առավել պակաս չափով է արգելքի դեմ առնում: Այն ժամանակ դեռ կարելի էր կանխել ճակատագիրը, բայց մահարկու սարսափը հեծյալ աղեղնավորների սմբակների բարձրացրած փոշու նման պատել էր ողջ երկիրը, թևածում էր այրված դաշտերի, կողոպտված շեների, անթաղ դիակների, առևանգված կանանց ու երեխաների բազմության, դեռևս անառիկ բերդերի ու քաղաքների վրայով, և ամեն մեկն իր անձի ու յուրայինի փրկության մասին էր հոգում, ո՞վ էր մտածում ամբողջի՝ ազգի ու հայրենիքի մասին»:

Ի՞նչ բան է, ուրեմն, ճակատագիրը: Մեկընդմիջտ վճռված պարտադրա՞նք, թե՞ պարզապես արգասիքը հայոց պատմության: Ճակատագի՞րն է սկիզբը կորուստների, թե՞ կամազուրկ մարդիկ են ստեղծում լքյալ ճակատագիր:

Ինչ արել ենք երեկ, կենդանի է, շարունակվում է իբրև անցյալի հետևանք ու հետք: Անցյալ բոլոր ժամանակներում մենք զբաղվել ենք միայն մեկ գործով՝ մեզ համար ճակատագիր ենք ստեղծել, որ հետո մեղադրենք նրան: Անցյալը, կապված է մեզ հետ, նա ոչ միայն փոխանցվում է մեզ, այլև պետք է գոյատևի նաև ապագայում: Այսօր մարդը կերտում է այն, ինչ հետո եկողները ճակատագիր են կոչելու: Սա է ճակատագրի պատմափիլիսոփայության այն մեկնակերպը, որն իբրև ժամանակակից մտածողության դրսևորում, ի հայտ է գալիս Վարդան Գրիգորյանի պատմավեպի մեջ:

Վեպում ճակատագրի դեմ է ելնում Գայլ Արշավիրը, տրվում է պայքարին, բայց կենդանի մնում, որ «ապրի իր պարտությունը»: Երկիրը փրկել չկարողացավ, բայց կռվեց, թեկուզ մեռան, բայց փորձեց կործանման առաջն առնել: Իրավունք ուներ ասելու ճակատագրի հետ հաշտվածներին. «ես գոնե կռվեցի ու մեղքերս գործով վաստակեցի, իսկ դուք, որ ոչինչ չարիք, կարծում եք անմե՞ղ եք, ոչ, ձեր մեղքն էլ հենց այդ է, որ ոչինչ չարիք, ձեր մեղքը հազարապատիկ մեծ է, քան իմը»: Արշավիրը տեսնում է թե վաղը ինչ է կատարվելու, նա մտածում է վաղվա մասին. «ես արածի համար եմ դատվում, իսկ դուք շատ ավելի վատ՝ չարածի համար եք պատասխան տալու: Իմ դատն այսօր է, ձերը հետո է կայանալու: Ձեր դատն ավելի դաժան է լինելու, որովհետև ձեզ

սերունդներն են դատելու: Մեկ օր, մեկ ամիս, մեկ տարի, մեկ դար, հազար տարի, անվերջ դատելու են ձեզ, ազգն անկարող է լինելու հիշողությունից ջնջել այս կորստյան դարը: Ատելությունս սերունդներին է փոխանցվելու, հավերժ ապրելու եմ նրանց ատելության մեջ»:

Ապստամբ Արշավիրին ճակատագիրը մղում է մաքառումի և պարտության, նա կործանում է իրեն ցեղի կործանումը կանխելու համար, որովհետև պատմությունն ու ճակատագիրը ստեղծվում է ցեղի կողմից: Սակայն ինչպիսի՞ն է հայի կամքը, ինչպիսի՞ն են հայ զինվորները: Զինավառ չէին, զենքերը չէին շողշողում ռազմական փայլով, ձիերը ծառս չէին լինում ու խրխմեցողով ցույց էեն տալիս հազիվ զսպվող իրենց ուժը: Չէ հայ զինվորներ էին՝ նախանջող բանակի զինվորներ, գլխահակ ու տխրադեմ: Ամեն տեղ նույնն էր, ամեն ինչի սկիզբը նույնն էր նույն խեղճությունը:

Վարդան Գրիգորյանը փորձում է պատասխանատվության չափը ճշտորոշել, որ ընկած էր Անիի առաջնորդների վրա, հոգևոր հովիվների վրա, զորականների և ժողովրդի վրա: Ուշադիր հետևելով հայ գործիչների վարքագծին, կտեսնենք, որ նրանք լքում էին իրենց հողը, Անիի բանակները ուղարկում էին թշնամուն, երկիրը բաժանբաժան էին անում, ամեն մի իշխան իրեն թագավոր էր հռչակում, իսկ նրանք, ովքեր հողը չէին լքում, այն փոխում էին ուրիշ երկրի ուրիշ հողերի հետ: Սրանք բոլորի ջանասիրությամբ էր, որ եղավ այն, ինչ եղավ: Բոլորի միտքն ու գործողությունները նույնն էր՝ իշխանի, հոգևորականի, զորականի, ժողովրդի և միայն բացառիկ օրինակ էր Գայլ Արշավիրն իր ջոկատով և իր բացառիկ լինելն էր թե իր և թե ազգի ողբերգության պատճառը: Արշավիրը խենթ ու ցավագար էր, և երկրին խենթեր ու ցավագարներ էին պետք: Երկիրը ցավի մեջ էր, իսկ ցավին տեր չկար: Իշխանն ու ծառան, թագավորն ու հետին մշակը ցավագար պիտի լինեին, որ փրկեին ցավագար երկիրը: Սակայն իրականությունը լրիվ հակառակն էր ցուցանում «հովիվներն ավելի վախկոտ են դարձել, քան գառները», «նրանք փակվել են փարախներում» իտղ անտեր թողնելով երկարաժամիք և անկուշտ, արյունից այտորժակ գրգռող, անհատակ փորով գայլերին:

Սարգիկ կորցրել են իրենց հավատը, չկա գաղափար, որի շուրջ համախմբվեն: Արշավիրը կոտրում է սուրը, ճգնավոր քարոզչի քրծեր հազնում և զգուշացնում մարդկանց մոտալուտ կործանման մասին, փորձում է պայքարի ոգի արթնացնել մարդկանց մեջ, հերոսական կռվի գաղափարներով սնել նրանց, բայց ավաղ, կույր են մարդիկ, նրան գժի տեղ են դնում, իսկ տերտերներն ու հոգևորական-

ները զանակոծում են նրան: Երկու ճակատով է կռվում Արշավիրը թշնամու կործանիչ սրի ու միզակի դեմ և սեփական ժողովրդի ինքնակործանիչ ոգու խեղճության, հավատի պակասի մի խոսքով թուլության դեմ: Այդ թուլությունից էր, որ հայը մտածեց թե փրկության ուղին երկիրը հռոմեերին հանձնելն է: Ոչ ոք գործ չէր անում, բոլորը սպասում էին: Բայց պարզվում է, որ դա հենց կործանման ուղին էր և Վարդան Գրիգորյանը ապստամբ Արշավիրի ընդդիմությունը նույնացնում է կյանքին:

Վեպի վերջաբանը արյունոտ գրչով է գրված, ցավ է կուտակված ամեն տողի տակ: Արշավիրն ապրեց, կռվեց և պարտության համը տեսավ, հիմա էլ մեռնում է կործանման զույժն առնելով. ««Հայոց 513 թվի մեհենական ամսին կործանվեց Ամին»» կզրեն ժամանակագիրները, բայց ոչ ոք չի իմանա, որ նույն տարվա, նույն ամսի նույն օրը կործանման կանխագագացումից պայթեց Գայլ Արշավիրի սիրտը: Կորստյան ցավը մի վերջին անգամ խոցեց-անցավ մարմինը և հազար կտոր արեց նրա սիրտը: Սիայն ձեռքն է, որ դեռ գրկել է հողը: Կայմը կոտրած առագաստի նման ճեղմակ շապիկը թփրտում էր քամու բերանին, փորձում ոտքի հանել հանգչող մարմինը, բայց ձեռքն այնպես էր կառչել հողից, որ ոչ մի ուժ ընդունակ չէ նրան կտրել զետմից: Եղածը կես գրկաչափ է, բայց թվում է ողջ երկիրն է կրծքով փակել: Գրկել է ու ոչ մեկին չի տա այդ մի կտոր հողը»:

Թերևս Վարդան Գրիգորյանի ազգապահպանման, կործանումից խուսափելու այս խնդիրները բոլոր ժամանակների համար են և այսօր էլ հրատապ ու արդիական են: Ցեղի գոյության ու բարգավաճման նվիրյալները Արշավիրներն են, ոչ թե Սենեքերիմներն ու Գագիկները: Հաղթանակը կռվողին է տրվում, ոչ թե թաքնվողին կամ փախչողին, և արդյունքը սա է, քիչ ենք կռվել, քիչ ունենք, շատ ենք փախել ու թաքնվել, շատ ենք կորցրել:

Այսօր, երբ կռվել ենք ու հաղթանակել, ունենք ազատ Արցախ, առավել ևս դասեր քաղենք պատմությունից և պահպանենք պիտի մեզ արյունով ավանդված մեր հողը:

Այս ճշմարտությունը պետք է քաղենք պատմությունից և ոչ թե զլուխ արդուկենք ազգային կեղծ սնապարծությամբ...

Ֆորմատ 84x60/8, ծավալը՝ 10.5 տպագրական մամուլ,
տպաքանակը՝ 300, թուղթ՝ օֆսեթ:
Տպագրությունը՝ «ՊՈԼԻԳՐԱՖ» ՓԲԸ
Ստեփանակերտ, Վ.Մամիկոնյանի փող., 21,
հեռ 4-89-96, 4-89-97, 4-89-98,

